# ՎՐԱՍՏԱՆ

«ვრასტანი» (საქართველო) ԹԵՐԹԸ ԼՈՒՅՍ Է ՏԵՍՆՈՒՄ 1920 Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻՑ № 48 - 49 (16346) ՇԱԲԱԹ, 11 ՀՈՒԼԻՍԻ 2015 Թ. ԳԻՆԸ՝ 25 ԹԵԹՐԻ


ՀԱՆՐԱԳՈՒՄԱՐՈՒՄ

## ԻՐԱԿԼԻ ՂԱՐԻԲԱՇՎԻԼԻ. «ՄԵՐ ՆՊԱՏԱԿՆ Է «ԱՐՏԱԴՐԻ'Ր ՎՐԱՍՏԱՆՈՒՄ» ՆԱԽԱԳԾԻՆ ՆԵՐԳՐԱՎԵԼ ԱՎԵԼԻ ՇԱՏ ՄԱՐԴ»

*Հուլիսի 7-ին Վրաստանի վարչապետ Իրակլի Ղարիբաշվիլին մասնակցեց «Արտադրի'ր Վրաստանում» նախագծի հանրագումարային միջոցառմանը: Իր ելույթում վարչապետը նշեց, որ Վրաստանի կառավարության նպատակն է աստիճանաբար ներկրումը փոխարինել սեփական արտադրությամբ:*



«Ես խոսել եմ հարեւան երկրների լիդերների հետ, որոնք հաջողությամբ իրականացրել են տեղական արտադրության խրախուսումը եւ դրա զարգացման նախագիծը: Դա նրանք արել են մի քանի տարի առաջ, եւ արդյունքները ակնհայտ են: Գործում են արդյունավետ գյուղատնտեսությունն ու փոքր եւ միջին ձեռներեցությունը: Մեզ համար նշանակալից է այն փաստը, որ, ունենալով նման արտադրություններ, ստեղծվում են աշխատատեղեր, եւ կարգավորվում է բնակչության զբաղվածության հարցը: Մեր իշխանության կարեւորագույն խնդիրն է այդ ծրագրին ներգրավել ավելի շատ մարդ»,- հայտարարեց Իրակ-

(Շարունակությունը՝ 4-րդ էջում)

ՄԵԾ ԵՂԵՌՆ -100

## ՑԵՂԱՍՊԱՆԱԳԵՏՆԵՐԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԸՆԿԵՐԱԿՑՈՒԹՅԱՆ 12-ՐԴ ՀԱՄԱԺՈՂՈՎ ԵՐԵՎԱՆՈՒՄ



Երեւանում ամերիկյան համալսարանի մեծ դահլիճում անցավ Ցեղասպանագետների միջազգային ընկերակցության «20-րդ դարի ցեղասպանությունների համեմատական վերլուծություն» խորագիրը կրող 12-րդ համաժողովը:

Համաժողովին, որը նվիրված էր Հայոց ցեղասպանության 100-րդ, ինչպես նաեւ Երկրորդ համաշխարհային պատերազմի եւ Հոլոքոստի 70-րդ տարելիցներին, մասնակցում էին Ցեղասպանագետների միջազգային ընկերակցության նախագահ Դանիել Ֆեյերստայնը, ցեղասպանագիտության եւ հարակից ոլորտների հարյուրից ավելի լավագույն մասնագետներ, հեղինակավոր գիտնականներ՝ աշխարհի տարբեր երկրներից: Համաժողովի բացմանը մասնակցեց եւ ելույթ ունեցավ Հայաստանի նախագահ Սերժ Սարգսյանը:

ԻՆՏԵԳՐՈՒՄ

## ԱՆՑԿԱՑՎԵՑ «1+4» ՆԱԽԱԳԾԻ ՇՆՈՐՀԱՆԴԵՍԸ



*Հուլիսի 7-ին Վրաստանի հաշտեցման եւ քաղաքացիական իրավահավասարության նախարար Պաատա Զաքարեիշվիլին եւ փոխնախարար Քեթեւան Ցիխելաշվիլին մասնակցեցին «1+4» նախագծի շնորհանդեսին:*

Նշենք, որ նախագծի հինգամյա գործունեության հաշվետվությունը ներկայացվեց Թբիլիսիի Ջավախիշվիլու անվան պետական համալսարանում:

Իր ելույթում, Պաատա Զաքարեիշվիլին խոսեց վերոնշյալ նախագծի նշանակության մասին: «Դա նշանակալի նախագիծ է: Վրաստանի կառավարությունը պատրաստ է համապատասխան պայմաններ ստեղծել ազգային փոքրամասնություններ

(Շարունակությունը՝ 3-րդ էջում)

ՓԱՍՏԱՐԿ

## ԳԻՈՐԳԻ ԿՎԻՐԻԿԱՇՎԻԼԻ. «ՏԱՐԱԴՐԱՄԻ ԿԱՅՈՒՆԱՑՈՒՄԸ ՆՇԱՆԱԿՈՒՄ Է ԿՏՐՈՒԿ ՏԱՏԱՆՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱՑՈՒՄ»

Ինչպես հայտարարեց Վրաստանի փոխվարչապետ, էկոնոմիկայի նախարար Գիորգի Կվիրիկաշվիլին, ազգային տարադրամի՝ լարիի կուրսը կայունացվել է: Փոխվարչապետի հավաստմամբ, տարադրամի կայունացումը նշանակում է կտրուկ տատանումների վերացում: «Այսօր տարադրամի կուրսը կայունացվել է: Ոչ հեռավոր անցյալում այն հասնում էր դոլարի համեմատությամբ 2,38-ին, իսկ այսօր այն տատանվում է 2,24-2,25 մակարդակին: Դա այն մակարդակն է, որը հիմնականում ձեռնտու է մեր առեւտրական գործընկերներին: Ուստիեւ, մենք չենք կարող արհեստականորեն ամրացնել ազգային տարադրամը՝ ելնելով նրանից, թե այսօրվա մեր առեւտրական հաշվեկշիռը արտացոլվում է տարադրամի համարժեքի վրա»,- հայտարարեց Կվիրիկաշվիլին:

ԽՈՐՀՐԴԱՐԱՆ

## ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ՝ «ԲՌՆԱԶԱՎԹՎԱԾ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ

*Վրաստանի խորհրդարանը ձեռնամուխ է եղել «Բռնազավթված տարածքների մասին» օրենքում եւ քրեական օրենսգրքում փոփոխությունների նախագծի քննարկմանը, որոնք վերաբերում են Աբխազիա եւ Հարավային Օսեթիա մուտք գործելու օրենքի խախտմանը, ինչպես նաեւ պետական սահմանի ապօրինի հատմանը:*



Գործող օրենսդրության համաձայն, վերոնշյալի խախտման դեպքում, քրեական գործ չի հարուցվում այն օտարերկրացիների նկատմամբ, ովքեր սահմանը հատել են Վրաստանում ապաստարան խնդրելու նպատակով: Փոփոխությունների հեղինակները առաջարկում են պատժամիջոցներ չկիրառել նաեւ «այն օտարերկրյա քաղաքացիների կամ քաղաքացիություն չունեցող անձանց նկատմամբ, ովքեր Վրաստան են եկել անմիջականորեն այն տարածքներից, որտեղ «Փախստականի կարգավիճակի մասին» կոնվեցիայի առաջին հոդվածով նախատեսվածով նրանց կյանքին կամ ազատությանը վտանգ է սպառնում: Նաեւ նրանք, ովքեր վերոնշյալ կոնվենցիայի ու Վրաստանի օրենսդրության համաձայն, Վրաստանի իշխանություններից ապաստարան են խնդրում եւ, ովքեր, ապօրինաբար գտնվելով Վրաստանի տարածքում, անմիջականորեն ներկայանում են իշխանության մարմիններին, ներկայացնում համապատասխան բացատրություններ:

(Խորագրի շարունակությունը՝ 2-րդ էջում)

ՎՐԱՍՏԱՆ-ՀԱՅԱՍՏԱՆ

## ՕԹԱՐ ԴԱՆԵԼԻԱ. «ՀԱՄՈԶՎԱԾ ԵՄ, ՈՐ ՇԱՏ ՀԱՐՑԵՐՈՒՄ ՄԵՆՔ ԿԱՐՈՂ ԵՆՔ ՄԻՄՅԱՆՑ ՕԳՆԵԼ»

### ՕԹԱՐ ԴԱՆԵԼԻԱՅԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԱՅՑԸ ՀԱՅԱՍՏԱՆ

*Հուլիսի 6-7-ին աշխատանքային այցով Երեւանում էր գտնվում Վրաստանի գյուղատնտեսության նախարար Օթար Դանելիան:*



Այցի շրջանակներում, Վրաստանի գյուղատնտեսության նախարարը հանդիպում ունեցավ Հայաստանի վարչապետ Հովիկ Աբրահամյանի, իր հայ գործընկեր Սերգո Կարապետյանի հետ, այցե-

(Շարունակությունը՝ 4-րդ էջում)

ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅՈՒՆ

## ԹՎԱՅԻՆ ՀԵՌԱՐՁԱԿՈՒՄՆ ԸՆԴԼԱՅՆՈՒՄ Է ՏԱՐԱԾՄԱՆ ՇՐՋԱՆԸ

### ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄԸ ԿԱՐԵԼԻ Է ՁԵՌՔ ԲԵՐԵԼ ԱՊԱՌԻԿ

Ինչպես արդեն հաղորդել ենք, հուլիսի 1-ից Վրաստանում, ավելի ստույգ Թբիլիսիի, Սագարեջոյի շրջանի, Կոջորիի, Ռուսթավիի եւ Մառնեուլիի հեռարձակման գոտում, համանման վերգետնյա հեռարձակումը փոխարինվեց թվային հեռարձակմամբ: Վերոնշյալ գոտում «Սեթ-թոփ բոքս» սարքի միջոցով արդեն ընդունում են թվա-

(Շարունակությունը՝ 4-րդ էջում)

ԽՈՐՀՐԴԱՐԱՆ

# ՕՏԱՐԵՐԿՐԱՑԻՆԵՐԸ ԿԱՐՈՂ ԵՆ ԲՈՂՈՔԱՐԿԵԼ ԿԵՑՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ ՄԵՐԺՈՒՄԸ



*Օտարերկրացիները, ում մերժել են Վրաստանում կեցության թույլտվություն հանձնելը, կարող են անվճար որոշումը բողոքարկել դատարանում:*

Այդ իրավունքը նրանց վերապահում են Վրաստանի խորհրդարանի կողմից ներկայումս քննարկվող «Իրավաբանական օգնության մասին» օրենքում կատարվելիք փոփոխությունները:

Օրինանախագծի համաձայն, օտարերկրացին, ում մերժել են կեցության վկայականի, փախստականի կարգավիճակի կամ հումանիտար կարգավիճակի հանձնումը, իրավասու է մերժումը ստանալուց տաս օրվա ընթացքում դիմել դատարան:

Օրինանախագծի նախաձեռնողը Վրաստանի բռնազավթված տարածքներից արտագաղթված անձանց եւ տեղաբաշխման գործերով նախարարությունն է: Օրինանախագիծը նախատեսում է նաեւ բոլոր նրանց համար անվճար իրավաբանական օգնության ցուցաբերում:

Նախաձեռնողները ներկայացված փոփոխություններն առնչում են Եվրամիության հետ այցեգրային պայմանակարգի ազատականացման ուղղությամբ գործողությունների ծրագրի կատարման կապակցությամբ եվրահանձնաժողովի հանձնարարականների կատարմանը:

ՖԻՆԱՆՍՆԵՐ

# ՆՈԴԱՐ ԽԱԴՈՒՐԻ. «ՀԱՐԿԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԴՈՒՐՍ Է ԱԶԳԱՅԻՆ ԲԱՆԿԻ ԻՐԱՎԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՇՐՋԱՆԱԿԻՑ»



*Վրաստանի ֆինանսների նախարար Նոդար Խադուրին նշեց, որ այս տարի ՀՆԱ-ն 2 տոկոսը չի գերազանցի, ինչը համապատասխանում է նաեւ ազգային բանկի տվյալներին:*

Ֆինանսների նախարարը մեկնաբանեց նաեւ պետբյուջեի ճշգրտված նախագծի մասին Ազգային բանկի հանձնարարականները: «Ազգային բանկը կառավարությանը խորհուրդ տվեց բյուջեի ծախսման մասին պակասորդի կրճատման համար օգտագործել հարկային լծակները: Կարճ ասած, խոսքը վերաբերում է հարկերի բարձրացմանը: Նշեմ, որ հարկային քաղաքականությունը դուրս է Ազգային բանկի իրավասությունների շրջանակից: Ինչ վերաբերում է պակասորդին, ապա դա չափազանցված է: Մենք կանխագծումները կատարում ենք միջազգային ֆինանսական կազմակերպությունների հետ համատեղ աշխատանքի արդյունքում: Նման կանխագծումներից մեկը, որի հետ համաձայն է նաեւ Ազգային բանկը, ՀՆԱ-ի մեծությունն է, որը 2 տոկոսից ավելի չի կարող լինել: Ներկայացվել են բացարձակապես կոնկրետ աղբյուրներ, որոնց շնորհիվ կլրացվի 200 միլիոնանոց պակասորդը: Խոսքը վերաբերում է բջջային կապի չորրորդ հավաստագրին, որի արդյունքում, բյուջեն կստանա 150 միլիոն լարիի եկամուտ: Միաժամանակ, ստանալու ենք 40 միլիոն լարիի դրամաշնորհ, ինչը, փաստորեն, կմարի պակասորդը: Կարեւոր նշանակություն ունեն նաեւ այսպես կոչված եկամուտները հանրային իրավունքի իրավաբանական երեք անձանցից: Դրանք են՝ ֆինանսների նախարարության քննչական ծառայությունը, ՆԳ նախարարության սպասարկման գործակալությունը եւ արդարադատության նախարարության հանրային իրավունքի իրավաբանական անձը: Դա բյուջեին լրացուցիչ կտա 20 միլիոն լարի: Ազգային տարադրամի փոխանակման վրա նշանակալի ազդեցություն կգործի նաեւ արտասահմանից Վրաստան մուտք գործող տարադրամի ծավալը»,- հայտարարեց Նոդար Խադուրին:

ՊԵՏԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ

# ՀԱՍՏԱՏՎԵԼ Է ՍՈՂԱՆՔԻՑ ԵՎ ՋՐՀԵՂԵՂԻՑ ՏՈՒԺԱԾՆԵՐԻ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆ ԿԱՐԳԸ

*Հուլիսի 5-ին, Թբիլիսիի սակրեբուլոն հաստատեց սողանքի եւ ջրհեղեղի արդյունքում տուժածների փոխհատուցման կարգը:*

Հաստատված կարգի համաձայն, տուժածները բաժանվում են երկու կատեգորիայի: Առաջին կատեգորիայում ընդգրկվել են նրանք, ովքեր կորցրել են բնակարանները, եւ դրանք վերականգնման ենթակա չեն, իսկ երկրորդ կատեգորիայում՝ այն ընտանիքները, ում տունը հնարավոր է վերականգնել:

Հաստատված կարգը տնօրինում է վնասի փոխհատուցման երկու տարբերակ: Մասնավորապես, միջոցների հատկացում բնակտարածքի չափով՝ ելնելով ընտանիքի անդամների թվից եւ նաեւ շուկայական արժեքով այն գույքի գնումը, որը տուժածները կորցրել են տարերքի արդյունքում: Տուժածներին վերապահվում է տարբերակի ընտրություն:

Մեկ կամ երկու անդամից բաղկացած ընտանիքներին կտրվի 45 քառակուսի մետր բնակտարածքի դրամական փոխհատուցում, երեք կամ չորս անդամից բաղկացած ընտանիքը կստանա 65 քառակուսի մետրին համապատասխան դրամական փոխհատուցում, հինգ կամ վեց անդամ ունեցող ընտանիքի դրամական փոխհատուցման հաշվարկը կիրականացվի 90 քառակուսի մետրի հաշվառմամբ: Իսկ այն ընտանիքները, որտեղ գրանցված է յոթ եւ ավելի անդամ, հաշվարկային ելակետը կլինի 110 քառակուսի մետրը:

Բացի այդ, տուժած ընտանիքները, ելնելով անդամների թվաքանակից, կստանան ընտանեկան փաթեթներ: Մասնավորապես, մեկ կամ երկու անդամ ունեցող ընտանիքի համար նախատեսված է 8 հազար լարիի փաթեթ, երեք-չորս անդամ ունեցող ընտանիքի համար՝ 8700 լարիի, հինգ-վեց անդամ ունեցող ընտանիքի համար՝ 9400 լարիի, իսկ յոթ եւ ավելի անդամ ունեցող ընտանիքի համար՝ 10500 լարիի փաթեթ:

# ԹԲԻԼԻՍԻԻ ՆՈՐ ԿԵՆԴԱՆԱԲԱՆԱԿԱՆ ԱՅԳՈՒ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ ԿՍԿՍՎԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ԳԱՐՆԱՆԸ




*«Վրաստանի մայրաքաղաքի նոր կենդանաբանական այգու նախագիծն արդեն պատրաստ է, 2016 թվականի գարնանը Թբիլիսյան ծովին հարող տարածքում՝ քաղաքի ծայրամասում, կսկսվի այգու շինարարությունը»,- հայտարարեց Թբիլիսիի քաղաքապետ Դավիթ Նարմանիան:*

Հունիսի լույս 14-ի գիշերը հեղեղումը լիովին ոչնչացրել էր կենդանաբանական այգու ստորին մասը, որը գտնվում է Թբիլիսիի Հերոսների հրապարակում: Կենդանաբանական այգու 600 բնակչից ողջ է մնացել կեսից քիչը:

«Կենդանաբանական այգին կկառուցվի զգալիորեն ավելի մեծ տարածքում: Նախագիծը, որի հայեցակարգն արդեն պատրաստ է, աշխատանքային գծագրերի պատրաստման կարիք ունի: Մեր խնդիրն է, որ այն կենդանիները, որոնք ողջ են մնացել, լինեն անվտանգության մեջ: Նախապատրաստական աշխատանքները կսկսվեն ընթացիկ տարվա աշնանը, իսկ շինարարական գործընթացը՝ եկող տարվա գարնանը»,- հայտարարեց Նարմանիան:

ՆՇԱՆԱԿՈՒՄ

# ՅՈՒՐԻ ԽԵՉՈՅԱՆԸ՝ ԾԱԼԿԱՅԻ ՄՈՒՆԻՑԻՊԱԼԻՏԵՏԻ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՂԵԿԱՎԱՐ



Յուրի Խեչոյանը 62 տարեկան է, ծնվել է Ծալկայի շրջանի Աշխալա գյուղում: Տեղի միջնակարգն ավարտելուց հետո, ավարտել է Երեւանի պոլիտեխնիկական ինստիտուտը: Տարբեր պատասխանատու պաշտոններ է զբաղեցրել Ծալկայի շրջանում:

Վրաստանի 1999-2004 թվականների գումարման խորհրդարանի Ծալկայի շրջանի մեծամասնական պատգամավոր: Այս տարվա հուլիսի սկզբներին Յուրի Խեչոյանը նշանակվել է Ծալկայի մունիցիպալիտետի առողջապահության, սոցիալական ապահովության, մշակույթի եւ սպորտի ծառայության պետ:



ՀՈՒՆԱՍՏԱՆ

## ՀԱՆՐԱՔՎԵԻ ԱՐԴՅՈՒՆՔՈՎ՝ «ՈՉ ՎԱՐԿԱՏՈՒՆԵՐԻՆ»

*Հույներն ամփոփեցին հուլիսի 5-ին անցկացրած հանրաքվեի արդյունքները, որի ընթացքում քաղաքացիներն իրենց կարծիքը հայտնեցին վարկատուների եռյակի (Արժույթի միջազգային հիմնադրամ (ԱՄՀ), Եվրոպական կենտրոնական բանկ (ԵԿԲ) եւ Եվրահանձնաժողով) առաջարկած խնայողության ծրագրի վերաբերյալ:*

*Քվեարկության արդյունքում «դեմ» է հանդես եկել 61,31 տոկոսը, «կողմ»՝ 38,69 տոկոսը: Մասնակցությունը կազմել է 62,5 տոկոս. հանրաքվեն ճանաչվում է կայացած, եթե դրան մասնակցում է գրանցված ընտրողների առնվազն 40 տոկոսը: Քվեարկությանը մասնակցելու իրավունք է ունեցել 9,9 միլիոն քաղաքացի:*

ՌՈՒՍԱՍՏԱՆ

## ՈՒՖԱՅՈՒՄ ԱՆՑԿԱՑՎԵՑ ԵԱՏՄ, ԲՐԻԿՍ ԵՎ ՇՀԿ ՂԵԿԱՎԱՐՆԵՐԻ ՀԱՆԴԻՊՈՒՄԸ

*Հուլիսի 9-ին Ուֆայում անցկացվեց Եվրասիական տնտեսական միության, ԲՐԻԿՍ-ի եւ Շանհայյան համագործակցության կազմակերպության անդամ երկրների ղեկավարների համատեղ նիստը:*

*ԲՐԻԿՍ-ի կազմում ընդգրկված են Ռուսաստանը, Հնդկաստանը, Չինաստանը եւ Բրազիլիան: Շանհայյան համագործակցության կազմակերպությունը միավորում է Ռուսաստանին, Ղազախստանին, Ղրղզստանին, Չինաստանին, Տաջիկստանին եւ Ուզբեկստանին: Կազմակերպությունում դիտորդի կարգավիճակ ունեն Աֆղանստանը, Հնդկաստանը, Իրանը, Մոնղոլիան եւ Պակիստանը, գործընկեր երկրներ են համարվում Բելառուսը, Թուրքիան եւ Շրի-Լանկան: ԵԱՏՄ անդամ երկրներն են՝ Հայաստանը, Ռուսաստանը, Ղազախստանը, Բելառուսը եւՂրղզստանը:*

ԹՈՒՐՔԻԱ

## ՁԵՌՆԱՄՈՒԽ ԵՆ ԵՂԵԼ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱՎՈՐՄԱՆԸ

*Թուրքիայի նախագահ Ռեջեփ Թայիփ Էրդողանը պաշտոնապես հանձնարարել է վարչապետ Ահմեդ Դավութօղլուին կազմել երկրի նոր կառավարությունը:*

*Քանի որ հունիսի 7-ին կայացած խորհրդարանական ընտրություններում որեւէ կուսակցության չի հաջողվել ստանալ ձայների բացարձակ մեծամասնությունը միակուսակցական կառավարություն կազմելու համար, նախագահի հանձնարարականից հետո, 45 օրվա ընթացքում, մեջլիս անցած կուսակցությունները պետք է գան համաձայնության կոալիցիոն կառավարություն կազմելու հարցի շուրջ: Եթե 45 օրվա ընթացքում կառավարություն չկազմվի, ապա երկրում կիրավիրվեն վաղաժամ խորհրդարանական ընտրություններ:*

ԵԱՀԿ

## ԸՆԴՈՒՆՎԵՑ ՌՈՒՍԱՍՏԱՆԻՆ ԴԱՏԱՊԱՏՈՂ ԲԱՆԱՁԵՎ

*Հելսինկիում անցկացվեց եվրոպայի անվտանգության եւ համագործակցության կազմակերպության Խորհրդարանական վեհաժողովը: Նշենք, որ ֆիննական կողմը մերժեց մուտքի այցեգիր հանձնել Ռուսաստանի պատվիրակության ղեկավար, Պետական դումայի խոսնակ Նարիշկինին, այն պատրվակով, որ նա հայտնվել է Եվրամիության կողմից կազմված «սեւ ցուցակում»*

*Խորհրդաժողովի լիագումար նիստում Կանադան եւ Ուկրաինան ներկայացրին Ռուսաստանին դատապարտող բանաձեւ: Խոսքը վերաբերում է Ուկրաինայի նկատմամբ Ռուսաստանի դիրքորոշմանը:*

*Ֆրանսիան, Շվեյցարիան եւ Հայաստանը հրաժարվեցին քվեարկել հակառուսական բանաձեւի հարցով: Նրանք այդ քայլը բացատրեցին նիստին ՌԴ պատվիրակության բացակայությամբ:*

# Շաբաթից շաբաթ. Փաստեր եւ իրադարձություններ

ՀԱՂՈՐԴՈՒՄ ԵՆ «ՎՐԱՍՏԱՆԻ» ԵՎ ԼՐԱՏՎԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹՂԹԱԿԻՑՆԵՐԸ

ԻՆՏԵԳՐՈՒՄ

## ԱՆՑԿԱՑՎԵՑ «1+4» ՆԱԽԱԳԾԻ ՇՆՈՐՀԱՆԴԵՍԸ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

ներկայացնող երիտասարդների լիարժեք կրթության, ինտեգրման եւ քաղաքացիական ինքնահաստատման համար: Իր հերթին, ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչները պետք է դրսեւորեն ակտիվություն, նախաձեռնություն: Այդ դեպքում, պետությունը պարտավոր կլինի բավարարել նրանց պահանջները»,- հայտարարեց Պաատա Զաքարեիշվիլին:

Նախագծի շնորհանդեսին ցուցադրվեց վավերագրական կինոնկար, ապա ծրագրի գնահատմամբ, ելույթ ունեցան նախագծի շրջանակներում անցկացված դասընթացների առաջին շրջանավարտները:

Նշենք, որ նախագծի շրջանակներում բուհի ուսանող դարձավ ավելի քան 2500 երիտասարդ: Ներկա դրությամբ, թբիլիսյան համալսարանում վրաց լեզվի դասընթացին գրանցված է 1500 ուսանող:



ԱՆՑԿԱՑՎԵՑ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏ

*Հուլիսի 9-ին, Վրաստանի պետական գրասենյակում, Վրաստանի վարչապետ Իրակլի Ղարիբաշվիլու նախագահությամբ անցկացվեց վարչապետին առընթեր անվտանգության խորհրդի նիստը: Նիստում քննարկվեցին Վրաստանի անվտանգության եւ հնարավոր մարտահրավերների հարցերը: Նիստն անցկացվեց դռնփակ:*

ԿՀԻՄՆՎԻ ԿՐՈՆԻ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

*Վրաստանի կառավարության գրասենյակում անցկացվեց կրոնի հարցերով պետական գործակալության աշխատակիցների հանդիպումը երկրի 11 համալսարանների ներկայացուցիչների հետ: Համալսարանների հետ վերոնշյալ հանդիպումն անցկացվեց գործակալության եւ բուհի միջեւ ստորագրած հուշագրի հիման վրա: Հանդիպմանը խոսեցին կրոնի հարցերով գիտական ակադեմիական ուսումնասիրությունների անցկացման անհրաժեշտության մասին: Ընդունվեց որոշում՝ հիմնել կրոնի քաղաքականության հետազոտման պետական կենտրոն: Այդ նպատակով, սահմանվեց համակարգչային խորհուրդ՝ յուրաքանչյուր համալսարանից մեկական ներկայացուցիչ, մշակվեց աշխատանքային թեմաների ցուցակը:*

ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶՆԵՐՈՒՄ ՍԿՍՎԵՑ ԳՐԱՆՑՄԱՆ ԵՐԿՐՈՐԴ ՓՈՒԼԸ

*Թբիլիսիի մանկապարտեզներում հուլիսի 8-ին մեկնարկել է 2015-2016 թվականների համար երեխաների գրանցման երկրորդ փուլը:*

*Նշենք, որ առաջին փուլում, որն սկսվել էր հուլիսի 1-ին, գրանցվել էին սոցիալապես անպաշտպան ընտանիքների, ջրհեղեղից տուժած ընտանիքների, մանկապարտեզներում երեխաներ ունեցող ընտանիքների, հատուկ կարիքավոր երեխաները: Նոր ուսումնադաստիարակչական տարում, Թբիլիսիում մանկապարտեզների թիվն ավելացել 4 միավորով: Այս տարի մայրաքաղաքի մանկապարտեզները կարող են ընդունել մոտ 10 հազար երեխա:*

ԹԲԻԼԻՍԻՈՒՄ ՓԼՈՒԶՎԵՑ ԲՆԱԿԵԼԻ ՇԵՆՔ

*Թբիլիսիում, Մարզապալատի մոտ, շենքի փլուզման հետեւանքով, չորս մարդ մնացել է փլատակների տակ: Մեկին հաջողվել է հանել փլվածքի տակից: Մնացած երեքը զոհվել են: Այս մասին հայտարարել է Վրաստանի արտակարգ իրավիճակների գործակալությունը:*

*Միջադեպի վայրում աշխատում են փրկարարներն ու շտապ օգնության աշխատակիցները: Շենքի վրա, որի մի մասը փլուզվել է, ծրագրվում էր կառուցել եւս երկու հարկ, ինչի համար շինարարները 24-ժամյա աշխատանքներ էին տանում:*

ԼՐԱՑԱՎ ԷԴՈՒԱՐԴ ՇԵՎԱՐԴՆԱԶԵԻ ՄԱՀՎԱՆ ՄԵԿ ՏԱՐԻՆ



*Հուլիսի 7-ին լրացավ վրաց ճանաչված քաղաքական գործիչ, Վրաստանի երկարամյա ղեկավար, Վրաստանի կոմկուսի Կենտկոմի առաջին քարտուղար, Խորհրդային Միության արտաքին գործերի նախարար, Վրաստանի պետական խորհրդի նախագահ, Վրաստանի նախագահ Էդուարդ Շեւարդնաձեի մահվան տարելիցը: Էդուարդ Շեւարդնաձեն նշանակալի դերակատարում ունեցավ սառը պատերազմի դադարեցման, Բեռլինի պատի կործանման, նորաստեղծ վրացական պետության կազմավորման գործում:*

ՆՈՐ ԱՐՏԱԴՐՈՒԹՅՈՒՆ

## ՆՎԱԶՈՒՄ Է ՇԻՆԱՆՅՈՒԹԵՐԻ ՆԵՐԿՐՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅՈՒՆԸ



***Գործընկերային հիմնադրամի աջակցությամբ, Ռուսթավիի խճուղու մոտակայքում շահագործման հանձնվեց իտալական ժամանակակից սարքավորումներով հագեցված «Պանեքս» գործարանը:***

Նոր արտադրության գործարկումը նշանակալիորեն կնվազեցնի շինարարական նյութերի, մասնավորապես՝ բետոնասալիկների ներկրման անհրաժեշտությունը:

Նոր արտադրության բացման արարողությանը մասնակցեց Վրաստանի վարչապետ Իրակլի Ղարիբաշվիլին: Նա, արտադրության տնօրեն Իրակլի Կովզանիձեի ուղեկցությամբ, դիտեց ձեռնարկությունը, ծանոթացավ շինանյութերի թողարկման տեխնոլոգիային:

Իր խոսքում, Վրաստանի վարչապետը հայտարարեց, որ նման արտադրությունները մեծ նշանակություն ունեն երկրի համար: «Համոզված եմ, որ նոր գործարանը նշանակալի ազդակ կհաղորդի շինարարական հատվածի զարգացմանը, կնվազեցնենք արտասահմանից անհրաժեշտ շինանյութերի երկրման ծավալները: «Պանեքսի» արտադրանքը ոչ միայն կբավարարի մեր պահանջմունքները, այլեւ կարտահանվի Ղազախստան, Ադրբեջան, Ուկրաինա եւ Ռուսաստան»,- ասաց վարչապետը:

ՇՆՈՐՀԱՆԴԵՍ

## ՄԵԿՆԱՐԿՈՒՄ Է ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՍԿԶԲՆԱԿԱՆ ՕՂԱԿԻ ԲԱՐԵՓՈԽՈՒՄԸ

***Հուլիսի 6-ին Վրաստանի առողջապահության նախարար Դավիթ Սերգեենկոն հայտարարեց ոլորտի բարեփոխման նոր ուղղության մասին:***

Նախարարությունը ծրագրում է իրականացնել առողջապահության սկզբնական օղակի բարեփոխումը: Այդ մասին նախարարը հայտարարեց հիվանդությունների վերահսկողության եւ հասարակական առողջության ազգային կենտրոնում անցկացված խորհրդաժողովին:

Դավիթ Սերգեենկոյի խոսքերով, համընդհանուր առողջապահության համակարգի հաջող ներդրման ու C հեպատիտի բուժման ծրագրի իրականացմանը զուգահեռ, նախարարությունը ծրագրում է ուշադրությունը բեւեռել առողջապահության սկզբնական օղակում առկա իրավիճակի կտրուկ բարելավման հարցի վրա: Նրա խոսքերով, օղակի աշխատանքի բարելավման նպատակով, միջազգային կազմակերպությունների հետ անցկացվում են խորհրդատվություններ:

«Առողջապահության սկզբնական օղակի աշխատանքի որակից մեծապես կախված է բնակչության առողջության մակարդակը եւ մատուցվող սպասարկումների մատչելիությունը: Հստակորեն պետք է ասել, որ կիրականացվի օղակի հիմնարար բարեփոխումը: Ընդհանրապես, սկզբնական առողջապահության օղակի վրա պետք է ընկնի բժշկական սպասարկումների 80 տոկոսը, եւ միայն 20 տոկոսը պետք է փոխանցվի ստացիոնար բուժման համակարգին»,- հայտարարեց Դավիթ Սերգեենկոն:



ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ

## ՍԱՄՑԽԵ-ՋԱՎԱԽԵԹԻՈՒՄ ԸՆԴԼԱՅՆՎՈՒՄ Է ՀՈՍՊԻՏԱԼԱՅԻՆ ՑԱՆՑԸ

***Բժշկական «Էվեքս» կորպորացիան ընդլայնում է հոսպիտալային ցանցը Սամցխե-Ջավախեթիում:***

Ինչպես տեղեկացրին կորպորացիայում, մեկ տարի անց, Ախալցիխեում, Ախալքալաքիում, Նինոծմինդայում եւ Ասպինձայում բացվեցին բարդ տեխնոլոգիական ժամանակակից հաստատություններ, որոնք լրիվությամբ կբավարարեն բարձրորակ սպասարկման հարցում տարածաշրջանի բնակչության պահանջարկը:

«Նախագծի ավարտից հետո, Սամցխե-Ջավախեթիում հիվանդանոցային մահճակալների թիվը կհասցվի 130-ի, եւ բժշկական բարդ վիրահատությունների համար տեղի բնակիչները ստիպված չեն լինի դուրս գալ երկրամասի տարածքներից»,- ասված է կորպորացիայի հայտարարության մեջ:

«Էվեքս» կորպորացիան վերոնշյալ նախագծի իրագման համար ներդրել է 12 միլիոն լարի:

ԽՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆ ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅՈՒՆ

## ՔԱՂԱՔԱՊԵՏԵՐԻ ՈՒ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀՆԵՐԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ ԲԱՐԴԱՑՎՈՒՄ Է



***Հերթական փոփոխություններն են կատարվելու տեղական ինքնակառավարման օրենսգրքում: Կառավարության կողմից նախաձեռնած օրինանախագծով, բարդացվում է սակրեբուլոների կողմից քաղաքապետերի եւ վարչության նախագահների հրավիրման ընթացակարգը:***

Մեզ հետ զրույցում խորհրդարանի մարդու իրավունքների կոմիտեի փոխնախագահ Գեդի Փոփխաձեն ասաց.

- Սակրեբուլոների իրավասությունները սահմանափակվում են նաեւ այլ ուղղություններով: Մասնավորապես, քաղաքապետարանի գույքի իրացումն իր տնօրինության ներքո գտնվող ՍՊԸ-ների միջոցով, հետայսու հնարավոր է իրականացնել սակրեբուլոյի շրջանցմամբ: Քաղաքապետարանները սակրեբուլոյի շրջանցմամբ նաեւ կհաստատեն այն որակավորման պահանջները, որոնք ներկայացվում են աշխատակիցների թեստավորման ժամանակ: Նշենք, որ կառավարության վերոնշյալ նախաձեռնության հետ համաձայն չեն անգամ կառավարող կոալիցիայի ներկայացուցիչները: Մեծամասնության ներկայացուցիչների համար անհասկանալի է, թե ինչու քաղաքապետերը եւ վարչության նախագահները պետք է խուսափեն սակրեբուլո ներկայանալուց այն դեպքում, երբ նման պատասխանատվությունից նախարարներն անգամ չեն կարող խուսափել:

ԻՐԱՎԱԿԱՆ

## ՄԻՋԱԴԵՊ ԳԻՇԵՐԱՅԻՆ ԱԿՈՒՄԲՈՒՄ

***Ինչպես տեղեկացրել է «Ռուսթավի-2» հեռուստաընկերությունը, ապրիլի 5-ին, քաղաքի գիշերային ակումբներից մեկում, ոստիկանությանը ցուցաբերած դիմադրության մեղադրանքով, ձերբակալվել էին Ֆիլիպ Բաբայանը եւ Արթուր Հովհաննիսյանը: Ձերբակալվածների հարազատների հավաստմամբ, երիտասարդներին ձերբակալել են ոստիկանության պաշտոնյային հակադրվելու համար:***

Ձերբակալվածներից մեկը ձեռքի ժամացույցում տեղակայված տեսախցիկի օգնությամբ տեսագրել է, թե ինչպես են իրավապահները Հին Թբիլիսիի ոստիկանության բաժանմունքում ծեծել մեղադրյալներին: Նշվում է, որ բաժանմունքում նրանց մեկ ժամ ծեծել են, թեպետ նրանց նկատմամբ բռնություն է գործադրվել նաեւ գիշերային ակումբում: Բաբայանի եւ Հովհաննիսյանի նկատմամբ արդեն սահմանվել է



երկամսյա արգելափակում:

Ոստիկանների դեմ հարուցվել է քրեական գործ:

ՀԱՆՐԱԳՈՒՄԱՐՈՒՄ

# ԻՐԱԿԼԻ ՂԱՐԻԲԱՇՎԻԼԻ. «ՄԵՐ ՆՊԱՏԱԿՆ Է «ԱՐՏԱԴՐԻ'Ր ՎՐԱՍՏԱՆՈՒՄ» ՆԱԽԱԳԾԻՆ ՆԵՐԳՐԱՎԵԼ ԱՎԵԼԻ ՇԱՏ ՄԱՐԴ»

(Սկիզբը՝ 1-ին էջում)

լի Ղարիբաշվիլին: Նրա խոսքերով, Վրաստանն ունի վիթխարի ուժ, որը գործնականում չի օգտագործվում: «Տարածված այն կարծիքը, թե իբր Վրաստանն աղքատ երկիր է եւ զուրկ՝ բնական ռեսուրսներից, չի համապատասխանում իրականությանը: Ես եղա բոլոր տարածաշրջաններում, մշակել ենք «Ուժեղ տարածաշրջան-ուժեղ Վրաստան» ծրագիրը: Տնտեսական խորհուրդն ու ճյուղային նախարարությունները յուրաքանչյուր տարածաշրջանի համար իմ հանձնարարությամբ մշակել են հատուկ ծրագրեր: Շրջանի մակարդակով, մենք ուսումնասիրեցինք տեղական ներուժերը: Դրանք մարդկային ռեսուրսներն են, բնական ռեսուրսները, որոնք առկա են Վրաստանում եւ, հավատացնում եմ, որ բացառիկ են: Մենք բացահայտեցինք շատ ռեսուրսներ, որոնք գործնականում չեն օգտագործվում»,- հայտարարեց Ղարիբաշվիլին:

Վարչապետն անդրադարձավ նաեւ բնական ռեսուրսների օգտագործման համար տրված հավաստագրերի կիրարկման հարցին: «Տարիներ շարունակ, մոտ քսան տարի, տեղի է ունենում մեր բնական ռեսուրսների պահածոյացումը: Արդյունքում տրված են տասնյակ հավաստագրեր, ունենք բացառիկ ռեսուրսներ, սակայն չեն օգտագործվում, քանի որ ժամանակին առանձին անձանց ջանքերով հավաստագրերը հայտնվեցին այնպիսի մարդկանց ձեռքում, որոնք այսօր էլ կոնկրետ քայլեր չեն ձեռնարկում դրանց օգտագործման համար: Դա հանցագործություն է: Նրանք իրավունք չունեն օգտագործել պետությանը պատկանող ռեսուրսներն իրենց անձնական շահերի համար: Մի քանի ամիս առաջ մենք գործնականում ավարտեցինք ռեսուրսների, դրանց օգտագործման համար տրված հավաստագրերի գրանցումը: Ներկայումս կոնկրետ քայլեր կձեռնարկվեն հարցի կարգավորման համար»,- հայտարարեց Ղարիբաշվիլին:

Իր ելույթում վարչապետը նշեց, որ «Արտադրի'ր Վրաստանում» նախագծի շրջանակներում մեկ տարվա ընթացքում սկսվել է 90 նոր նախագիծ: Ընդհանուր առմամբ, նախագծերի իրականացման համար ներդրումը գերազանցում է 252 միլիոն լարին: Միաժամանակ, ծրագրի շրջանակներում կոմերցիոն բանկերի կողմից մասնավոր հատվածին տրվել է շուրջ 122 միլիոն լարիի վարկ: «Ինչ վերաբերում է աշխատատեղերին, ապա նախագծի շրջանակներում աշխատանքով ապահովվել է շուրջ 5 հազար մարդ, որից 3900-ը մշտական աշխատանք ունեն»,- հայտարարեց վարչապետը:

ՎՐԱՍՏԱՆ-ՀԱՅԱՍՏԱՆ

# ՕԹԱՐ ԴԱՆԵԼԻԱ. «ՀԱՄՈԶՎԱԾ ԵՄ, ՈՐ ՇԱՏ ՀԱՐՑԵՐՈՒՄ ՄԵՆՔ ԿԱՐՈՂ ԵՆՔ ՄԻՄՅԱՆՑ ՕԳՆԵԼ»

(Սկիզբը՝ 1-ին էջում)



լեց Հայաստանում գործող նորագույն տեխնոլոգիաներով հագեցած մի շարք տնտեսություններ:

Վրաստանի գյուղատնտեսության նախարարի ու Հայաստանի վարչապետի հանդիպմանը, Հովիկ Աբրահամյանը նշեց, որ այցը կնպաստի գյուղատնտեսության ոլորտում հայ-վրացական արդյունավետ համագործակցության հետագա խորացմանը: Բարձր գնահատելով երկու երկրների միջեւ բարեկամական հարաբերությունների եւ միջպետական երկխոսության մակարդակը՝ Հովիկ Աբրահամյանը կարեւորեց փոխայցելությունները եւ գործնական սերտ շփումները:

Իր հերթին, Օթար Դանելիան շնորհակալություն հայտնեց ընդունելության համար եւ Հայաստանի վարչապետին փոխանցեց Վրաստանի վարչապետի ջերմ ողջույնները:

Զրուցակիցները փաստեցին, որ առկա արդյունավետ համագործակցությունը լուրջ նախադրյալներ է ստեղծում վրաց-հայկական գյուղատնտեսական կապերի սերտացման համար, եւ քննարկեցին փոխգործակցության ընդլայնմանը վերաբերող մի շարք հարցեր: Կողմերն ընդգծեցին, որ գյուղատնտեսության ոլորտի զարգացումը տնտեսության կայուն զարգացման առաջնահերթություններից է, եւ երկուստեք վերահաստատեցին ձեռք բերված պայմանավորվածությունների ու համատեղ նոր ծրագրերի իրականացմանն աջակցելու պատրաստակամությունը: Կողմերը համոզմունք հայտնեցին, որ Վրաստանի եւ Հայաստանի անդամակցությունը տարբեր տնտեսական միավորումներին նոր հնարավորություններ կստեղծի երկու երկրների գործարար շրջանակների համար:

Հանդիպմանը Հայաստանի վարչապետը կարեւորեց Վրաստանի կառավարության կողմից ամռան ամիսներին Վերին Լարսի սահմանային անցակետի գործունեությունը 3 ժամով երկարաձգելու փաստը, ինչը կնպաստի գյուղատնտեսական ապրանքների փոխադրման եւ տարանցման գործընթացների անխափան կազմակերպմանը:

Հանդիպման ավարտին՝ վարչապետ Հովիկ Աբրահամյանն իր ջերմ ողջույնները փոխանցեց Վրաստանի վարչապետ Իրակլի Ղարիբաշվիլուն:

Աշխատանքային այցի շրջանակներում, Վրաստանի գյուղատնտեսության նախարարն իր հայ գործընկերոջ ուղեկցությամբ, փորձի փոխանակման նպատակով, այցելեց «Արարատի սննդի կոմբինատ» եւ «Գոլդն Գրեյպ Արմաս» ընկերություններ, Արարատի մարզում գտնվող ձկնաբուծարաններից մեկը, «Սպայկա» ընկերության ջերմոցային տնտեսություններ, Ջերմուկի անասնապահական համալիր:

Հայաստանի գյուղատնտեսության նախարար Սերգո Կարապետյանի խոսքով, վրացի գործընկերներն առավելապես հետաքրքրված են պահածոների արտադրության, ձկնաբուծական տնտեսությունների, անասնապահական ֆերմաների զարգացման հայկական փորձի ուսումնասիրությամբ եւ իրենց երկրում ներդրման հնարավորություններով:

«Որպես հարեւան երկրներ՝ մենք գյուղատնտեսության ոլորտում իրարից շատ բան ունենք սովորելու, եւ այս այցը հատկապես կարեւոր է փորձի փոխանակման, ինչպես նաեւ գործընկերային հարաբերությունների սերտացման առումով»,- նշեց Սերգո Կարապետյանը:

Նախարարի խոսքով, նախատեսվում է նաեւ իր պատասխան այցը Վրաստան:

Վրաստանի գյուղատնտեսության նախարար Օթար Դանելիան, իր հերթին, գոհունակություն է հայտնել Հայաստանում գյուղատնտեսության ոլորտի բարձր մակարդակով:

«Սա իմ առաջին պաշտոնական այցն է Հայաստան: Պետք է նշեմ, որ մեզ շատ է տպավորել, թե որքան զարգացած է ձեր երկրում գյուղատնտեսության ոլորտը: Համոզված եմ, որ մենք շատ հարցերում կարող ենք միմյանց օգնել, աջակցել, փորձի փոխանակում իրականացնել»,- նշեց Օթար Դանելիան:

Նա վստահություն հայտնեց, որ Վրաստանի եւ Հայաստանի միջեւ գյուղատնտեսության բնագավառում առկա է համագործակցության, ինչպես նաեւ արտահանման մեծ ներուժ, որը հարկավոր է օգտագործել:

ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅՈՒՆ

# ԹՎԱՅԻՆ ՀԵՌԱՐՁԱԿՈՒՄՆ ԸՆԴԼԱՅՆՈՒՄ Է ՏԱՐԱԾՄԱՆ ՇՐՋԱՆԸ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

յին հեռարձակումը, ինչը, բարձր որակի հեռարձակմանը զուգընթաց, թույլ է տալիս ընդունել ավելի մեծ քանակի վրացական հեռուստաալիքներ:

Չնայած Վրաստանի հաղորդակցության ազգային հանձնաժողովի հավաստացումներին, ըստ որի, վերջինս առավելագույնս փորձում է բուկլետներով կամ հեռուստագովազդներով բնակչությանը տեղեկացնել, թե ինչ է նշանակում թվային հեռարձակում, այն հաշվով, որ բնակիչները նախապատրաստված դիմավորեն նորամուծությունը, հարկ է նշել, որ շատերի մոտ թվային հեռարձակման վերաբերյալ պատկերացումը բավականին մակերեսային է: Այդ մասին են վկայում խմբագրության փոստով վերջին ժամանակներում ստացվող նամակները:

Հիշեցնենք, որ նորամուծությունն առնչվում է բնակչության այն կատեգորիային, որը հեռուստաալիքներն ընդունում է բաց եթերից, այսինքն՝ տանիքներին մոնտաժած ալեհավաքներով, եւ որի հեռուստացույցը զուրկ է DVB-T2 ստանդարտի աջակցությունից: Հասարակության այդ հատվածին, թվային ձեւաչափով բաց հեռուստաազդանշանն ընդունելու համար, կպահանջվի հատուկ սարք՝ «Սեթ-թոփ բոքս» սարքավորումը, որը միացվում է հին հեռուստացույցին: Այսինքն, բարեփոխումը վերաբերում է հավասարապես բոլոր ընտանիքներին, բացառությամբ նրանց, ովքեր կաբելային, արբանյակային եւ ինտերնետ-հեռուստատեսության սպառողներ են համարվում:

Ինչ վերաբերում է թվային հեռարձակմամբ արդեն իսկ գործող հեռուստաընկերությունների ցուցակին, ապա այն հետեւյալն է. «Իմեդի» HD, «Ռուսթավի-2» 2 HD, «Առաջին ալիք» HD, GDS HD, «Տաբուլա» +HD, «Կոմեդի արխի» HD, «Մարաո» HD, «Արտարեա» HD, «Թրիալեթի» HD, RGB, SD, «Պալիտրա» HD, SILK+ SD, «Սամեգրելո» HD, «Զազանովա» HD, «Պուլսի» HD, «Օբյեկտիվի» HD, «Էրթսուլովնեբա» HD, «Օմեգա»:

«Սեթ-թոփ բոքս»-ը կարելի է գնել սպառողական տեխնիկայի խանութներում: Սարքը գնելիս, ցանկալի է առանձնակի ուշադրություն հատկացնել նվազագույն տեխնիկական պարամետրերի վրա, մասնավորապես, սարքն ունի՞ արդյոք DVB-T2 ստանդարտի աջակցությունը, դրանով կարելի է՞ արդյոք ընդունել վրացական հեռուստաալիքները, ի՞նչ տառատեսակով կարելի է իրականացնել կարգավորումը, տրվո՞ւմ է արդյոք NOMI, RCA կամ SCART կաբելները, որքանո՞վ է սարքը բավարարում անվտանգության պահանջներին: Բացի այդ, սարքը գնելիս, ցանկալի է ստանալ ապահովագրական պայմաններ:

Նրանց համար, ովքեր ցանկանում են գնել ժամանակակից հեռուստացույց, որի գործառույթները համապատասխանում են Վրաստանի թվային հեռուստատեսությունների համար սահմանված տեխնիկական պահանջների փաստաթղթերին, անհրաժեշտ է միայն փոխել պարամետրերը:

Բնակչության այն հատվածը, որն օգտվում է հեռուստաարձակման տարանցիկ սպասարկումից (կաբելային օպերատորից) կամ արբանյակային հեռուստաարձակման հատուկ սարքավորումից, նրան վերոնշյալ նորամուծությունը չի առնչվում, եւ նրանց «Սեթ-թոփ բոքս» սարքավորում պետք չէ, եթե, իհարկե, չեն ցանկանում հեռարձակում ընդունել բաց եթերով:

Սոցիալապես անապահով ընտանիքների համար, ում վարկանիշային միավորը 70 000 է եւ պակաս, պետությունը կաջակցի գնել սերտիֆիկացված «Սեթ-թոփ բոքս»-եր եւ Վրաստանի փոստի օգնությամբ կբաժանի տարածաշրջանային սպասարկման կենտրոններում:

Սահմանափակ ունակություններ ունեցող մարդկանց ընտանիքներին պետությունն ապահովում է «Սեթ-թոփ բոքս»-ը բնակության վայր առաքելուն:

Այժմ մի քանի խոսք՝ «Սեթ-թոփ բոքս»-




սարքի մասին: Ներկա դրությամբ, վաճառքում կան երկու տեսակի սարքեր՝ «Eurostar» եւ «TV Star»: Դրանց գինը տատանվում է 55-65 լարիի սահմաններում, թեպետ «Eurostar»-ի թողարկմամբ կան նաեւ այլ սարքեր, որոնց արժեքը կազմում է 70-80 լարի:

Շուկայում կարելի է գնել նաեւ «Sven» ֆիրմայի սարք, որի արժեքը 95 լարի է:

Առավել մանրամասն տեղեկատվություն կարելի է ստանալ «Թվային հեռուստաարձակման գործակալության» 1480 թեժ հեռախոսահամարով:

Ինչ վերաբերում է թվային հեռուստաարձակման առավելություններին, ապա, նորամուծության ներդրմամբ, զգալիորեն կբարելավվի ձայնի եւ պատկերի որակը, կաճի հեռարձակողների քանակը եւ մեդիա շուկայում կստեղծվի մրցունակ միջավայր, սահմանափակ ունակություններ ունեցող անձանց համար հնարավոր կլինի օգտագործել աուդիո-մատչելի պատկերներ ու ենթագրեր:

Ըստ տարածաշրջանների, թվային հեռուստաարձակմամբ համանման հեռուստաարձակման փոխարինմանը կնախորդեն հանդիպումները, որոնց նպատակը նորամուծության վերաբերյալ տեղի բնակչությանը մանրամասն տեղեկատվություն հաղորդելն ու դրա ներդրման համար մարդկանց ժամանակի վերապահումն է: Մասնավորապես, Աջարիայի Ինքնավար Հանրապետությունում նման հանդիպումները կանցկացվեն հուլիսի 27-ին Բաթումի եւ Քոբուլեթի քաղաքներում, իսկ թվային հեռուստաարձակման անցումը կիրականացվի հուլիսի 30-ից: Սամցխե-Ջավախեթիի տարածաշրջանում հանդիպումները կանցկացվեն օգոստոսի 15-ին Ախալցիխե եւ Բորժոմի քաղաքներում, իսկ անցումը կիրականացվի օգոստոսի 18-ից:

Ավելացնենք, որ, էկոնոմիկայի նախարարության եւ Վրաստանի բանկերի ասոցիացիայի ու բանկային հատվածի համագործակցությամբ, երկրի բնակչությանը հնարավորություն է ընձեռվել ապառիկ ձեռք բերել թվային հեռարձակման սարքը:

Ինչպես հայտարարեց Վրաստանի էկոնոմիկայի փոխնախարար Նաթիա Միքելաձեն, վերոնշյալ համագործակցության արդյունքում, բնակչության այն հատվածը, որի համար դժվար է լրիվությամբ վճարել «Սեթ թոփ բոքս»-ի արժեքը, կստանա արտոնյալ պայմաններում սարքը ապառիկ գնելու հնարավորություն:

«Թվային հեռուստաարձակման անցումը լայնամասշտաբ բարեփոխում է: Դրա հաջող իրականացումը կարեւոր նշանակություն ունի ինչպես երկրի, այնպես էլ՝ յուրաքանչյուր քաղաքացու համար: Հետեւաբար, մենք ուրախ ենք այն պատրաստակամության համար, որը ներկայացրեց Վրաստանի բանկային հատվածը: Առանձնակի շնորհակալություն եմ ուզում հայտնել բանկային ասոցիացիային օպերատիվ եւ համակարգված համագործակցության համար»,- հայտարարեց Նաթիա Միքելաձեն:

Իր հերթին, Վրաստանի բանկերի ասոցիացիայի նախագահ Զուրաբ Գվասալիան հայտարարեց, որ Վրաստանի բանկերի աջակցությամբ նշանակալի կաճի թվային հեռարձակումից օգտվողների թիվը, քանի որ նրանք անարգել կարող են ստանալ այդ ապահովող սարքը:

*ՅՈՒՐԻ ԽՈՐԵՆՅԱՆ*